

Օրենսգրքի փոփոխվող հոդվածներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 134. Շահութահարկի հաշվարկների ներկայացումը

Ռեզիդենտ շահութահարկ վճարողները, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում շահութահարկի հաշվարկ: Մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող՝ սույն մասով սահմանված շահութահարկի հաշվարկում ներառվում է նաև մշտական հաստատությանը չվերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազան և Օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող շահութահարկի գումարը:

Հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում նախորդ հաշվետու եռամսյակում ոչ ռեզիդենտ

շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկ:

Հարկային գործակալի բացակայության դեպքում առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմնի՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանն սպասարկող ստորաբաժանում են ներկայացնում շահութահարկի հաշվարկներ:

րդ մասն ուժը կորցրել է 29.04.2025 թվականից՝ 22.04.25 ՀՕ-76-Ն օրենք)

5. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված հաշվետու ֆինանսական հաստատությունները Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով և Օրենսգրքի 443.4-րդ հոդվածով սահմանված ժամկետում հարկային մարմին են ներկայացնում հաշվետու հաշիվների վերաբերյալ Ստանդարտով սահմանված տեղեկությունները:

~~Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական հաստատությունները մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա մայիսի 10-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի~~

Հոդված 156. Եկամտային հարկի հաշվարկները և այլ

փաստաթղթերը ներկայացնելը

Հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի հաշվարկ, որտեղ ներառվում են տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց (բացառությամբ միայն պասիվ եկամուտներ ստացող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի, իսկ սոցիալական վճարներ կատարող ֆիզիկական անձանց մասով՝ նաև հաշվարկված և պահված սոցիալական վճարների վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի: Եկամտային հարկի հաշվարկում ներառվում են նաև տվյալ հարկային գործակալից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բացառապես պասիվ եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց պասիվ եկամուտների և Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձի եկամուտների, ինչպես նաև այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի գումարների վերաբերյալ ամփոփ տվյալներ:

Հարկային գործակալները նոր աշխատողին (բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) աշխատանքի ընդունելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատողի կողմից աշխատանքը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, իսկ աշխատանքի ընդունելու օրն աշխատանքը փաստացի սկսելու դեպքում՝ մինչև աշխատանքի ընդունելու օրվա ժամը 14:00-ն, Օրենսգրքի 53-րդ հոդվածով

սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում նոր աշխատողի գրանցման հայտ, որտեղ ներառվում են անհատական տեղեկություններ (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության (հաշվառման) վայրը, հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը), ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկություններ), բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

Հարկային գործակալները, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումներին համապատասխան, հարկային մարմին են ներկայացնում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով ներգրավված փորձնակի և մասնագիտական ուսուցում անցնող աշակերտի գրանցման հայտ, որտեղ ներառվում են օրենքով սահմանված տեղեկություններ:

Եթե նոր աշխատողի համար գրանցման հայտում և (կամ) եկամտային հարկի հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, ապա սույն անձի համար գրանցման հայտը և (կամ) եկամտային հարկի հաշվարկը հարկային մարմին է ներկայացվում Կառավարության սահմանած կարգով:

Եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) օրենսդրությամբ սահմանված՝ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվությունը չի լրացվում:

Ֆիզիկական անձինք (անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն՝

մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի պարզեցված հաշվարկներ:

յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի

օրվանից) մինչև հուլիսի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր), բացառությամբ սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքերի:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող և տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող ֆիզիկական անձինք (բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող ֆիզիկական անձանց) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից (մարտի 2-ը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրվանից) մինչև հուլիսի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ

Ֆիզիկական անձինք սույն մասով սահմանված՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկները (հայտարարագրերը) ներկայացնում են հետևյալ ժամկետներում.

թվականի հաշվետու տարվա համար՝

ա. 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

բ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից

գ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի ընթացքում ստացել են

մ թվականի հաշվետու տարվա համար՝

լ ա. 2024 թվականի ընթացքում վարձու աշխատող համարված՝ սույն խարբերության 1-ին կետում չնշված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

ն բ. 2024 թվականի ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրերի ջրջանակում հարկվող եկամուտ ստացած՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

մ գ. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության թասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

յի դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի դեկտեմբերի 31-ի վրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2023 թվականի արդյունքներով մեկ կիլիարդ դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից

մ ա ե. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության

ե
լ
ի

Ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

գ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի ընթացքում ստացել են մ

ի է. սույն պարբերության 1-ին կետում նշված ֆիզիկական անձինք.

թվականի հաշվետու տարվա և դրան հաջորդող տարիների համար՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

ն Անկախ սույն մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգավորումներից՝ փարեկան հաշվարկ (հայտարարագիր) չեն ներկայացնում այն անձինք, որոնց վերաբերող տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն՝ սահմանափակ ձգտագործման ենթակա տեղեկատվություն համարվող՝ հարկվող եկամուտների թասով:

չ

ա Հայտարարագրման ենթակա չեն ընտանիքի անդամներից ստացվող՝ նվազեցվող (չհարկվող) եկամուտները: Սույն պարբերության կիրառության իմաստով՝ եկամտային հարկի հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը, ճնողները, քույրերը, եղբայրները, զավակները (որդեգրողներն ու որդեգրվածները), պապերը, տատերը և թոռները: Կառավարությունը կարող է սահմանել եկամտային մարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) հայտարարագրման ոչ ենթակա եկամուտների տեսակներ կամ շեմեր:

Ճարկային գործակալները մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող եարկային տարվա մարտի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում նախորդ հարկային տարվա ընթացքում

ի

փ

ո

միայն պասիվ եկամուտներ ստացած ֆիզիկական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց, նրանց եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ բանկային կամ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների:

6. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված հաշվետու ֆինանսական հաստատությունները Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով և Օրենսգրքի 443.4-րդ հոդվածով սահմանված ժամկետում հարկային մարմին են ներկայացնում հաշվետու հաշիվների վերաբերյալ Ստանդարտով սահմանված տեղեկությունները:

~~Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական հաստատությունները մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա մայիսի 10-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի~~

Հոդված 335. Հարկային ստուգումները

Հարկային ստուգումը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկ վճարողների (համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջաններում կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերում՝ իրավահաջորդի ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց, իսկ Օրենսգրքով

սահմանված դեպքերում՝ հաշվառումից հանված անհատ ձեռնարկատիրոջ մոտ սույն գլխով սահմանված կարգով իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմինն հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, հարկային մարմինն հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով հարկային պարտավորությունները ճշգրտելը, այդ թվում՝ ինքնուրույն հաշվարկելն ու վերահաշվարկելը, հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմինն իրավունք ունի իրականացնելու հետևյալ տեսակների հարկային ստուգումները.

համալիր հարկային ստուգում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև հարկային մարմինն հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջների կատարման ստուգում.

թեմատիկ հարկային ստուգում՝ հարկ վճարողի գործունեությանն առնչվող՝ հարկային մարմինն հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների կատարման ստուգում.

տրանսֆերային գնագոյացման ստուգում՝ վերահսկվող գործարքների՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության պարզում և դրա արդյունքում շահութահարկի և բնօգտագործման վճար ռոյալթիի հաշվարկման և վճարման ամբողջականության ճշտության ստուգում:

Թեմատիկ հարկային ստուգման հարցերն են՝

հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտությունը.

պետական տուրքի հաշվարկման և գանձման ճշտությունը.

ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կամ նույնականացման միջոցների կիրառման ճշտությունը.

Field Code Changed

աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտությունը.

Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանման ճշտությունը.

Field Code Changed

Field Code Changed

Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում ու կարգով վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու, այդ թվում՝ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորության ապահովման կամ կանխիկ դրամով գումարի ընդունման սահմանափակումների պահպանման ճշտությունը.

հաշվարկային փաստաթղթերի (բացառությամբ ՀԴՄ կտրոնի) դուրսգրման համար սահմանված կարգի ու կանոնների պահպանման ճշտությունը.

հարկման բազայի հաշվարկման համար հիմք հանդիսացող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գների ճշտությունը.

հարկ վճարողի գործունեության իրականացման հասցեում սահմանված տեղեկությունները փակցնելը.՝

Ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտությունը:

Հարկային և լիազոր մարմինների հսկողության շրջանակներում լիազոր մարմինների մասնակցությամբ կարող են անցկացվել նաև համատեղ համալիր հարկային ստուգումներ: Համատեղ համալիր հարկային ստուգումներին լիազոր մարմինների

Հոդված 339. Հարկային ստուգման հանձնարարագիրը

Հարկային ստուգումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի տված հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են՝

հանձնարարագրի ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և համարը.

հարկ վճարողի (համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջաններում

կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերում իրավանախորդի ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները կամ հանրային ծառայության համարանիշը, ՀՎՀՀ-ն, հաշվառման վայրը.

ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված դեպքերում ստուգմանը մասնակցող այլ անձի (անձանց) անունը, ազգանունը, անձնագրային տվյալները կամ հանրային ծառայությունների համարանիշը.

ստուգման տեսակը և իրավական հիմքերը.

ստուգման հարցերը.

ստուգվող ժամանակաշրջանը՝ ըստ ստուգման տեսակների ու հարցերի.

ստուգման ժամկետը.

տեղեկություններ հարկ վճարողի իրավունքների ու պարտականությունների մասին.

ստուգման անցկացման մասին ծանուցված լինելու և ստուգումը փաստացի սկսելու օրվա վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելու դաշտերը:

Թեմատիկ հարկային ստուգումների իրականացման համար հարկային մարմնի ղեկավարի հրամանով հանձնարարագրի տրման լիազորությունը կարող է փոխանցվել համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարին: Սույն մասում նշված՝ հանձնարարագրի տրման լիազորության փոխանցման վերաբերյալ հարկային մարմնի ղեկավարի հրամանը տեղադրվում է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում: ↔

Համալիր հարկային և տրանսֆերային գնագոյացման ստուգումների հանձնարարագիրը ստուգումն սկսելուց առնվազն երեք աշխատանքային օր առաջ հարկ վճարողին՝ ծանոթացման: Ընդ որում՝

ին կետն ուժը կորցրել է 01.10.2022 թվականից՝ 04.03.22 ՀՕ-55-Ն օրենք)

հանձնարարագիրը (այն հրապարակելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային

ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը) հարկ վճարողին ծանոթացման է ներկայացվում էլեկտրոնային ծանուցման եղանակով: Հարկ վճարողը հանձնարարագրին (այն հրապարակելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակին) համարվում է պատշաճ ծանուցված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում նշված փաստաթղթերը տեղադրելու օրվանից: ←

համալիր հարկային և տրանսֆերային գնագոյացման ստուգումների հանձնարարագիրը հարկ վճարողին ծանոթացման ներկայացնելու օրը հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը Օրենսգրքի 353-րդ հոդվածով նախատեսված կարգով իրավասու է վերցնելու կամ առգրավելու հարկ վճարողի հարկային հսկողությանն առնչվող անհրաժեշտ փաստաթղթեր և իրեր, այդ թվում՝ համակարգչային ծրագրեր և էլեկտրոնային ֆայլեր:

րդ կետն ուժը կորցրել է 01.10.2022 թվականից՝ 04.03.22 ՀՕ-55-Ն օրենք)

Թեմատիկ ստուգման հանձնարարագիրը ներկայացվում է հարկ վճարողին ծանոթացման, հետևյալ կարգով.

թեմատիկ հարկային ստուգման՝ Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ, ներառող հանձնարարագրի կնքված երկու օրինակը առձեռն ծանոթացման է ներկայացվում ստուգման ընթացքում՝ մինչև ստուգման հանձնարարագրում նշված ստուգման ժամկետի վերջին օրը ներառյալ, բայց ոչ ուշ, քան յուրաքանչյուր անգամ խախտում հայտնաբերելուց անմիջապես հետո, իսկ թեմատիկ հարկային ստուգման՝ Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ և 9-րդ կետերով կամ դրանցից որևէ մեկով սահմանված հարցերը ներառող հանձնարարագրի կնքված երկու օրինակը առձեռն ծանոթացման է ներկայացվում [անմիջապես ստուգումն սկսելիս, իսկ Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով սահմանված հարցը](#)

ներառող հանձնարարագրի կնքված երկու օրինակը առձեռն ծանոթացման է ներկայացվում ստուգումն սկսելիս երեք աշխատանքային օր առաջ ~~անհրապեհ ստուգումն սկսելիս~~.

Թեմատիկ հարկային ստուգման՝ Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ, հարկային մարմինը կարող է իրականացնել հսկիչ գնում (գնումներ)՝ Օրենսգրքի

թեմատիկ հարկային ստուգման շրջանակում Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի հայտնաբերված յուրաքանչյուր խախտում համարվում է առանձին խախտում.

թեմատիկ հարկային ստուգման՝ Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ, սահմանված հարցերը ներառող ստուգման դեպքում ստուգումը փաստացի սկսելու օրվա վերաբերյալ գրառումը հանձնարարագրում կատարում են ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք.

հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը պարտավոր է ստորագրել հանձնարարագրի կնքված երկու օրինակի վրա, հաստատելով, որ ծանուցված է թեմատիկ հարկային ստուգման անցկացման մասին, որոնցից մեկը (հարկային մարմնի օրինակը) վերադարձվում է հարկային մարմնի պաշտոնատար անձանց.

հանձնարարագիրն ստորագրելուց կամ ստանալուց հրաժարվելու կամ հարկ վճարողի պաշտոնատար անձի բացակայության դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում հանձնարարագրի՝ այն հրապարակելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը հարկ վճարողին է ուղարկվում սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգով:

Հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող

պաշտոնատար անձի բացակայությունը կամ ստուգման հանձնարարագիրը չստորագրելը կամ հանձնարարագիրն ստանալուց հրաժարվելը հիմք չի հանդիսանում թեմատիկ հարկային ստուգումներ չանցկացնելու համար:

Հանձնարարագրում չնշված անձինք չեն կարող մասնակցել ստուգմանը: Ստուգումն իրականացնող անձանց կազմի փոփոխությունները և լրացումները կատարվում են հանձնարարագիրը տվող պաշտոնատար անձի հրամանով: Փոփոխման կամ լրացման մասին հրամանն արձակելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձը էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ հրամանի տեսաներածված տարբերակը հարկ վճարողին ծանոթացման է ներկայացնում էլեկտրոնային ծանուցման եղանակով մինչև ստուգումն իրականացնող անձանց ստուգմանը մասնակցելը, բացառությամբ թեմատիկ հարկային ստուգման՝ Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված հարցերի ստուգման, երբ գործում են սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով այդ ստուգումների համար սահմանված առանձնահատկությունները:

Եթե ստուգման անցկացման մասին հարկ վճարողի ծանուցված համարվելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում սույն հոդվածին համապատասխան տրված ստուգման հանձնարարագրի հիման վրա ստուգում չի սկսվում, ապա այդ ժամկետին հաջորդող օրն այդ հանձնարարագիրը համարվում է անվավեր:

Հոդված 340. Հարկային ստուգումների հարցերը և ստուգվող ժամանակաշրջանները

Համալիր հարկային ստուգման հարցերը ներառում են հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջների կատարման ճշտության ստուգման հարցերը, բացառությամբ տրանսֆերային գնագոյացման ստուգման հարցերի:

Տրանսֆերային գնագոյացման ստուգման հարցերը ներառում են այդ մասով

հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, վերահսկվող գործարքների՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության պարզման և դրա արդյունքում շահութահարկի և բնօգտագործման վճար ռոյալթիի հաշվարկման և վճարման ամբողջականության ճշտության ստուգման հարցերը, բացառությամբ համալիր հարկային ստուգման հարցերի:

.2. Ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության ստուգման հարցերը ներառում են՝

ա. հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Օրենսգրքի 443.3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հաշվետվության մեջ ներառված տեղեկությունների ամբողջականությունը և ճշտությունը ստուգելու նպատակով հարցերը.

բ. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից պատշաճ ստուգման ընթացակարգերով նախատեսված պարտավորությունների կատարումը ստուգելու հարցերը.

գ. Օրենսգրքի 80.2-րդ գլխից բխող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտավորությունների կատարումը ստուգելու հարցերը:

Համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջանը ներառում է՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո հարկային հաշվարկներ ներկայացնելու պարտավորություն նախատեսող բոլոր հարցերի գծով՝ ստուգման հանձնարարագրի տրման օրվա դրությամբ հարկային հաշվարկների ներկայացման ժամկետները լրացած և համալիր հարկային ստուգմամբ չստուգված բոլոր հաշվետու ժամանակաշրջանները.

հարկային հաշվարկներ ներկայացնելու պարտավորություն չնախատեսող կամ մինչև հաշվետու ժամանակաշրջանն սկսելը հարկային հաշվարկներ ներկայացնելու պարտավորություն նախատեսող հարցերի գծով՝ հարկային ստուգմամբ չստուգված բոլոր ժամանակաշրջանները մինչև ստուգման ավարտը:

Տրանսֆերային գնագոյացման ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջանը ներառում է հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո հարկային հաշվարկների, վերահսկվող գործարքների մասին ծանուցումը ներկայացնելու պարտավորություն նախատեսող բոլոր հարցերի գծով՝ ստուգման հանձնարարագրի տրման օրվա դրությամբ հարկային հաշվարկների, ինչպես նաև վերահսկվող գործարքների մասին ծանուցման ներկայացման ժամկետները լրացած և տրանսֆերային գնագոյացման ստուգմամբ չստուգված բոլոր հաշվետու ժամանակաշրջանները:

Սույն բաժնի կիրառության իմաստով՝

համալիր հարկային և տրանսֆերային գնագոյացման ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ է համարվում տվյալ հարցով ստուգված ժամանակաշրջանի ավարտի օրվան հաջորդող օրը.

եթե համալիր հարկային ստուգմամբ չստուգված ժամանակաշրջանում հարկ վճարողի մոտ իրականացվել են թեմատիկ հարկային ստուգումներ, ապա թեմատիկ հարկային ստուգմամբ ստուգված հարցով ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ է համարվում տվյալ հարցով ստուգված ժամանակաշրջանի ավարտի օրվան հաջորդող օրը.

եթե հարկ վճարողի մոտ համալիր հարկային և տրանսֆերային գնագոյացման ստուգում չի անցկացվել, ապա ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ է համարվում կազմակերպության պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրը.

հարկային մարմնին լիազորություններ վերապահող օրենսդրության նոր պահանջներ ուժի մեջ մտնելու դեպքում ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ է համարվում համապատասխան իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրը.

համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջանի ավարտ է համարվում սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հարցերով ստուգվող վերջին հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը, իսկ սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հարցերով՝ ստուգման ավարտի օրը:

Վերստուգման դեպքում համալիր հարկային և տրանսֆերային գնագոյացման ստուգման հարցերը ներառում են նախկինում նույն տեսակի համալիր հարկային և տրանսֆերային գնագոյացման ստուգմամբ (ստուգումներով) ստուգված ժամանակաշրջանների հարցերը:

Թեմատիկ հարկային ստուգման հարցերը ներառում են Օրենսգրքի 335-րդ հոդվածի լիազորություններ վերապահող օրենսդրության պահանջներին դրանց կատարման համապատասխանության մասով: Թեմատիկ հարկային ստուգումների հարցերի համար ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ է համարվում նույն հարցով նախորդ համալիր հարկային կամ թեմատիկ հարկային ստուգմամբ ստուգված ժամանակաշրջանին հաջորդող օրը: Թեմատիկ հարկային ստուգումների հարցերի համար ստուգվող ժամանակաշրջանի ավարտ է համարվում ստուգման ավարտի օրը:

Field Code Changed

Ստուգման ընթացքում նոր հանգամանքներ և (կամ) անհրաժեշտություն առաջանալու դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա կամ հարկ վճարողի առաջարկությամբ ստուգման հարցերը կարող են փոփոխվել կամ լրացվել նոր հարցերով կամ ստուգվող ժամանակաշրջանները կարող են լրացվել նոր ստուգվող ժամանակաշրջաններով՝ հանձնարարագիրը տվող պաշտոնատար անձի հրամանով: Փոփոխման մասին հրամանն արձակելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձը էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ հրամանի տեսաներածված տարբերակը հարկ վճարողին ծանոթացման է ներկայացնում էլեկտրոնային ծանուցման եղանակով: Համալիր հարկային և տրանսֆերային գնագոյացման ինչպես նաև թեմատիկ՝ ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության ստուգման դեպքում նոր լրացված հարցի կամ ստուգվող ժամանակաշրջանի ստուգման սկիզբ է համարվում հրամանի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը հանձնելու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային

օրը, իսկ թեմատիկ հարկային ստուգումների դեպքում՝ հրամանի պատճենը հանձնելու օրը, բացառությամբ Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված հարցերի ստուգման, երբ գործում են Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով այդ ստուգումների համար սահմանված առանձնահատկությունները:

Հոդված 402.3. Ֆինանսական հաստատության կամ հաշվետերերի և վերահսկող անձանց կողմից ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու, հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն ներկայացնելու, ստուգման

1. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Օրենսգրքի 80.2 գլխով կամ 80.2 գլխով սահմանված իրավական ակտերով սահմանված պատշաճ ուսումնասիրության կամ հավաստող փաստաթղթերի պահպանման պարտավորությունները յուրաքանչյուր հաշվետիրոջ մասով չկատարելու դեպքում՝ Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

2. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Ստանդարտով սահմանված տեղեկությունները Օրենսգրքի 80.2 գլխի կամ դրա համաձայն ընդունված իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով հարկային մարմնին Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում՝ յուրաքանչյուր չտրամադրված տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 500 հազար դրամի չափով: Տուգանքի նշանակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից տեղեկությունները չտրամադրելու

դեպքում յուրաքանչյուր չտրամադրված տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

3. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Ստանդարտով սահմանված տեղեկությունները Օրենսգրքի 80.2 գլխի կամ դրա համաձայն ընդունված իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով հարկային մարմնին Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից ուշ տրամադրելու դեպքում յուրաքանչյուր Օրենսգրքով սահմանված ժամկետից ուշ տրամադրված տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 250 հազար դրամի չափով:

4. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում յուրաքանչյուր ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

5. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերի նպատակներով ստացված հինրահայտարարագրի մեջ կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություն տրամադրելու դեպքում Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

. Հաշվետերերի և Վերահսկող անձանց կողմից հինրահայտարարագրի չներկայացման դեպքում կամ ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկություն տրամադրելու դեպքում Հաշվետերերից կամ Վերահսկող անձանցից յուրաքանչյուր չներկայացման կամ ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկության տրամադրման համար գանձվում է տուգանք՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

7. Եթե Հաշվետու ֆինանսական հաստատությունը օտարերկրյա իրավաբանական կազմավորում կամ մասնաճյուղ է, որը գտնվում է Հայաստանում, տույժը կիրառվում է Հաշվետու ֆինանսական հաստատության գործունեության կառավարման համար պատասխանատու անձ(-անց) նկատմամբ: Սույն մասի

կիրառման նպատակով, պատասխանատու անձ(-ինք)ը տրաստի դեպքում ներառում են՝ կառավարիչ(ներ)ին, իսկ գործընկերության դեպքում՝ գործընկերներին:

Սույն հոդվածով սահմանված խախտումների հայտնաբերման դեպքերում տուգանքները չեն կիրառվում, եթե Ֆինանսական հաստատությունը ձեռնարկել է խախտումը վերացնելու համար անհրաժեշտ գործողություններ և փաստացի դրանք վերացրել է մինչև պատասխանատվության միջոցի վարույթի ավարտը, կամ խախտումը կրում է տեխնիկական բնույթ:

9. Մինչև սույն հոդվածով սահմանված տուգանքի կիրառումը, հարկային մարմինը տուգանքի կիրառման մասին վարչական ակտի նախագիծը ներկայացնում է ՀՀ Կենտրոնական բանկ՝ վարչական ակտով սահմանված տուգանքի կիրառման պարագայում հաշվետու Ֆինանսական հաստատությանը Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված ծանր Ֆինանսական կացության հանգեցնելու հնարավորության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով: Կենտրոնական բանկի կողմից նման եզրակացություն ստանալու դեպքում հարկային մարմինը կարող է չկիրառել վարչական ակտով արձանագրված տուգանքը, եթե հաշվետու Ֆինանսական հաստատությունը պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ:

Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական հաստատության (այսուհետև սույն հոդվածում՝ ֆինանսական հաստատություն) կողմից Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված հաշվետերերի և վերահսկող անձանց (այսուհետև սույն հոդվածում՝ հաշվետերեր և վերահսկող անձինք)՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական հաշիվների (այսուհետև սույն հոդվածում՝ ֆինանսական հաշիվներ) վերաբերյալ Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները (այսուհետև սույն հոդվածում՝ տեղեկություն) հարկային մարմնին Օրենսգրքով սահմանված ժամկետում չտրամադրելու կամ այդ ժամկետից ուշ տրամադրելու դեպքում յուրաքանչյուր չտրամադրված կամ Օրենսգրքով սահմանված

ժամկետից — ուշ — տրամադրված — տեղեկության — համար — ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 500 հազար դրամի չափով:

Սույն հոդվածի 1-ին մասով կամ սույն մասով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմինն չտրամադրելու դեպքում յուրաքանչյուր չտրամադրված տեղեկության համար ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում յուրաքանչյուր ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկության համար ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն հարկային մարմին չներկայացնելու դեպքում ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 250 հազար դրամի չափով:

Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց՝ Միասնական հաշվետվողական ստանդարտով սահմանված պատշաճ ստուգման հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

Սույն հոդվածով սահմանված խախտումների դեպքերում տուգանքները կիրառում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով:

Սույն հոդվածով սահմանված դեպքերի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և հարկային մարմինը համատեղ՝ հարկային մարմնի տված մեթոդական ցուցումների

կամ ազդակների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:

Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված վերահսկողության ընթացակարգն ու մեթոդաբանությունը սահմանվում են հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով:

Սույն հոդվածով սահմանված խախտումների դեպքերում տուգանքները չեն կիրառվում, եթե ֆինանսական հաստատությունը դրանք վերացրել է մինչև պատասխանատվության միջոցի վարույթ հարուցելը, կամ խախտումը կրում է տեխնիկական բնույթ, որի չափանիշները կարող են սահմանվել սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված մեթոդաբանությամբ:

«Գ Լ ՈՒ Խ 80.2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ

ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

ԳԼՈՒԽ 80.2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՊԱԿԲԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԵՏ

ԿԱՊՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂ ԱՆՁԱՆՑ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 443.3. Կիրառվող հասկացություններ

Սույն գլխում, ինչպես նաև սույն գլխի դրույթներից բխող Օրենսգրքի այլ հոդվածներում նշված հասկացություններն ունեն Ստանդարտով սահմանված նշանակությունը, մասնավորապես՝

1) Ստանդարտ՝ Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման Միասնական հաշվետվողական ստանդարտը՝ ներառյալ

վերջինիս Մեկնաբանությունը, որը հաստատվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից 2014 թվականի հուլիսի 15-ին՝ ներառյալ հետագա փոփոխությունները: Հարկային մարմինն ապահովում է Ստանդարտի, ինչպես նաև դրա փոփոխությունների և լրացումների թարգմանությունն ու դրանց պաշտոնական հրապարակումը՝ դրանք տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում.

2) Կոնվենցիա՝ Հայաստանի Հանրապետության կողմից 2018 թվականի հունվարի 24-ին ստորագրված «Հարկային հարցերով փոխադարձ վարչական օգնության մասին» կոնվենցիան, ներառյալ հետագա փոփոխությունները.

3) Համաձայնագիր՝ Հայաստանի Հանրապետության կողմից 2024 թվականի հունվարի 12-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների թափանցիկ համաձայնագիրը՝ ներառյալ հետագա փոփոխությունները.

4) Տեղեկությունների տրամադրում՝ հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով սահմանված հաշվետվություն, որով Ստանդարտով սահմանված տեղեկությունները Հաշվետու ֆինանսական հաստատությունը ներկայացնում է հարկային մարմին:

5) Հաշվետու հաշիվ՝ մեկ կամ մի քանի հաշվետու անձանց պատկանող ֆինանսական հաշիվ կամ պասիվ ոչ ֆինանսական կազմակերպության հաշիվ, որը վերահսկվում է հաշվետու անձ հանդիսացող անձանց կողմից և որը նույնականացվել է որպես այդպիսին՝ Ստանդարտով նախատեսված պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերի կիրառման արդյունքում:

6) Հաշվետու անձ՝ հաշվետու պետության անձ, բացառությամբ ընկերության, որի բաժնետոմսերը պարբերաբար վաճառվում են արժեթղթերի մեկ կամ մի քանի մասնագիտացված շուկայում, այդ ընկերության փոխկապակցված ընկերության, պետական մարմնի, միջազգային կազմակերպության, կենտրոնական բանկի կամ ֆինանսական հաստատության:

7) Հաշվետու ֆինանսական հաստատություն՝ ՀՀ ռեզիդենտ ֆինանսական հաստատություն (բացառությամբ այդ ֆինանսական հաստատության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող մասնաճյուղերի) և Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ ոչ ռեզիդենտ ֆինանսական հաստատության մասնաճյուղ, որոնք Ստանդարտի և սույն կետի իմաստով չեն հանդիսանում ոչ հաշվետու ֆինանսական հաստատություններ: Ոչ հաշվետու ֆինանսական հաստատությունների ցանկը հաստատվում է հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հրամանով:

Հաշվետու պետություն՝ պետություն, որի հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա: Փոխանակում իրականացնող պետությունների ցանկը յուրաքանչյուր տարվա մինչև դեկտեմբերի 30-ը հարկային մարմինը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում.

9) Ազատված հաշիվ՝ Ստանդարտով սահմանված հաշիվներ, որոնց ցանկը հաստատվում է հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի համատեղ հրամանով:

~~Հոդված 443.3. Օտարերկրյա պետությունների (տարածքների) հետ ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների ավտոմատ փոխանակման ընդհանուր կանոններ~~

~~Օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմինների հետ ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների ավտոմատ փոխանակումը Հայաստանի Հանրապետության վավերացրած «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայով (2010 թվականի արձանագրությամբ փոփոխված) ու «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրով (այսուհետև սույն գլխում՝ Համաձայնագրեր), ինչպես~~

նաև՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հրապարակած՝ Միասնական հաշվետվողական ստանդարտի և դրա մեկնաբանության (այսուհետև՝ սույն գլխում՝ Ստանդարտ) հիման վրա հարկային մարմնի կողմից օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին (որոնց հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակում) ավտոմատ եղանակով սույն գլխով նախատեսված տեղեկության տրամադրումը և տեղեկության ստացումն է:

Հարկային մարմինն ապահովում է Ստանդարտի, ինչպես նաև դրա փոփոխությունների և լրացումների թարգմանությունն ու դրանց պաշտոնական հրապարակումը՝ դրանք տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում:

Սույն գլխում կիրառվող հասկացություններն ունեն Ստանդարտով սահմանված նշանակությունը:

Սույն գլխի դրույթները տարածվում են Ստանդարտով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական հաստատությունների և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ ֆինանսական հաստատությունների (այսուհետև՝ ֆինանսական հաստատություններ) վրա:

Սույն գլխի դրույթները տարածվում են օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտ համարվող հաշվետերերի և վերահսկող անձանց վրա՝

նոր բացվող ֆինանսական հաշվի դեպքում՝ անկախ ֆինանսական հաշվի արժեքից, գործող ֆինանսական հաշիվների դեպքում (բացառությամբ Օրենսգրքի 443.6-րդ հոդվածի 4.6-րդ մասերով սահմանված դեպքերի), երբ առկա է 250 հազար Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարը կամ դրան համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող՝ հարկային տարվա սկզբի կամ վերջին օրվա դրությամբ ֆինանսական հաշիվների մնացորդների հանրագումար, ինչպես նաև երբ հարկային տարվա ընթացքում ֆինանսական հաշիվների մուտքերի (ավելացումների) գումարների հանրագումարը

կամ ելքերի (նվազեցումների) գումարների հանրագումարը գերազանցում է 250 հազար Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարը կամ դրան համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գործող ֆինանսական հաշիվների դեպքում՝ Օրենսգրքի 443.6 բոլ հոդվածի 4.6 բոլ մասերով սահմանված կարգավորումների մասով՝ անկախ ֆինանսական հաշիվ արժեքից:

Սույն հոդվածի 5 բոլ մասի կիրառության իմաստով՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը կամ համարժեք արտարժույթը որոշելիս հիմք է ընդունվում համապատասխանաբար հարկային տարվա սկզբի կամ վերջին օրվա դրությամբ, ինչպես նաև համապատասխան մուտքերի (ավելացումների) կամ ելքերի (նվազեցումների) օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Սույն հոդվածի կիրառության իմաստով, որպես տվյալ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք, հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մինչև տվյալ օրվա ժամը 16:00 ն հրապարակված միջին փոխարժեքը:

Հոդված 443.4. Հաշվետու ֆինանսական հաստատությունների կողմից տեղեկությունների տրամադրում

. Հաշվետու ֆինանսական հաստատությունը մինչև յուրաքանչյուր օրացուցային տարվա հունիսի 30-ը ներառյալ էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում նախորդ տարվա բոլոր հաշվետու հաշիվների վերաբերյալ տեղեկությունները: Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից հաշվետու հաշիվների վերաբերյալ հարկային մարմինն տեղեկությունների տրամադրման կարգը, ձևաչափը և դրա լրացման կարգը սահմանվում է հարկային մարմնի և

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով:

Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Ստանդարտով սահմանված պատշաճ ստուգման ընթացակարգերի արդյունքում տվյալ օրացուցային տարում հաշվետու հաշիվներ չբացահայտելու դեպքում ֆինանսական հաստատությունը մինչև յուրաքանչյուր օրացուցային տարվա հունիսի 30-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացնում զրոյական հաշվետվություն՝ հարկային մարմնի կողմից սահմանված կարգով և ձևով:

Ֆինանսական հաստատության կողմից Ստանդարտով սահմանված պատշաճ ստուգման ընթացակարգը սահմանվում է հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հրամանով:

Հոդված 443.4. Ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ կապված հարկային մարմնին տեղեկության տրամադրումը

Ֆինանսական հաստատությունները պարտավոր են Օրենսգրքի 134-րդ և 156-րդ հոդվածներով սահմանված ժամկետներում հարկային մարմին ներկայացնել Ստանդարտով սահմանված հաշվետերերի և վերահսկող անձանց և դրանց ֆինանսական հաշիվների մասին տեղեկություն (այսուհետև՝ սույն գլխում՝ տեղեկություն), եթե հաշվետերերի և վերահսկող անձանց վերաբերյալ Օրենսգրքի ֆինանսական հաստատությանը հասանելի տեղեկության հիման վրա բացահայտվել է, որ դրանք օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտներ են:

Եթե Օրենսգրքի 443.6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընթացակարգերի կամ ֆինանսական հաստատությունում առկա տեղեկության հիման վրա չեն բացահայտվել օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտ

հանդիսացող հաշվետուները և վերահսկող անձինք, ապա ֆինանսական հաստատությունը պարտավոր է մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա մայիսի 10-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել այդպիսի հաշվետուների և վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն՝ հարկային մարմնի սահմանած ձևով:

Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված տեղեկությունը ֆինանսական հաստատությունը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ֆինանսական հաստատության կողմից հաշվետուների և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների տրամադրման կարգը և տեղեկությունների ձևաչափը սահմանվում են հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով:

Սույն գլխով նախատեսված ընթացակարգերի արդյունքում հաշվետուի կամ վերահսկող անձի՝ հարկային մարմնին անհայտ եկամուտների վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում այդ եկամուտները համարվում են տվյալ հաշվետու տարում ստացված, քանի դեռ դրանք այլ ժամանակաշրջանում ստացված լինելու վերաբերյալ փաստը չի ապացուցվել հաշվետուի կամ վերահսկող անձի կողմից:

Հարկային մարմինը պետք է ապահովի իրեն հասանելի դարձած անձնական տվյալների և բանկային կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիք համարվող տեղեկատվության՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան պահպանումը:

Հոդված 443.5. Փաստաթղթերի պահպանությունը

Հաշվետու ֆինանսական հաստատությունը պարտավոր է պահպանել Ստանդարտով, Համաձայնագրով և սույն գլխով սահմանված պարտավորությունների

կատարումը հավաստող պատշաճ ստուգման ընթացակարգերն իրականացման ընթացքում ձեռքբերված փաստաթղթերը:

Ֆինանսական հաշիվներին վերաբերող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև համակարգչային ծրագրերում և էլեկտրոնային կրիչներում առկա տեղեկատվությունը, Ֆինանսական հաստատությունը պահպանում է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան հինգ տարի ժամկետով: Օտարերկրյա պտույտունների (տարածքների) իրավասու մարմինների ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների փոխանցման, հարկային մարմնի կողմից այդպիսի տեղեկությունների ստացման կարգերը, ինչպես նաև փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների պահպանության պահանջները սահմանում է Կառավարությունը:

Հոդված 443.5. Ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ կապված հարկային մարմնի լիազորությունները

Ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ կապված՝ հարկային մարմինը ֆինանսական հաստատությունից ստանում է հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների վերաբերյալ սույն Գ

Հարկային մարմինը ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունները փոխանցում խօտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին (հաշվետու խետություններին), որոնք ներառված են այն պետությունների (տարածքների) ցանկում, որոնց հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակում, և որոնց ռեզիդենտներն են հանդիսանում եաշվետերերը և վերահսկող անձինք: Պետությունների (տարածքների) ցանկը, որոնց մետ իրականացվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակում, հրապարակում է հարկային մարմինը՝ այն տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում:

Ա

Բ

Գ

Դ

Սույն հոդվածի 2-րդ մասում նշված օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին՝ ֆինանսական հաշիվների մասին տեղեկության փոխանցման, հարկային մարմնի կողմից այդպիսի իրավասու մարմիններից տեղեկության ստացման կարգերը, ինչպես նաև փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների պահպանության պահանջները սահմանում է Կառավարությունը:

Հարկային մարմինն իրավունք ունի Համաձայնագրերով սահմանված նպատակներով օգտագործելու օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններից ստացված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունները՝ որպես Օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված՝ երրորդ անձից ստացված տեղեկություններ:

Հոդված 443.6. Պարտավորություններից խուսափելը

. Սույն գլխի պահանջներից խուսափելու, ինչպես նաև դրանք չկատարելու նպատակով որևէ գրավոր կամ բանավոր պայմանավորվածություն ձեռք բերելու դեպքում, այն ձեռքբերած անձանց նկատմամբ տարածվում են Ստանդարտի Համաձայնագրի և սույն գլխի դրույթները, եթե հաստատվում է, որ նման պայմանավորվածության հիմնական նպատակը սույն Գլխի պահանջներից խուսափելը կամ չկատարելն է:

Հոդված 443.6. Ֆինանսական հաստատությունների, հաշվետերերի և վերահսկող անձանց պարտականություններն ու իրավունքները՝ կապված ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ

Հաշվետերերի և վերահսկող անձանց ռեզիդենտությունը պարզելու համար ֆինանսական հաստատությունն իրականացնում է հաշվետերերի և վերահսկող անձանց՝ Ստանդարտով սահմանված պատշաճ ուսումնասիրություն:

Հաշվետերերը և վերահսկող անձինք պարտավոր են ֆինանսական հաստատություն ներկայացնել իրենց և (կամ) փոխկապակցված հաշվետերերի ու վերահսկող անձանց վերաբերյալ՝ ֆինանսական հաստատության կողմից սույն գլխին համապատասխան պահանջվող տեղեկությունը:

Եթե անձը ֆինանսական հաշիվ բացելիս ֆինանսական հաստատությանը չի տրամադրում սույն գլխով և Ստանդարտով պահանջվող տեղեկությունները, ապա ֆինանսական հաստատությունը մերժում է ֆինանսական հաշիվ բացելը:

Ֆինանսական հաստատությունը պարտավոր է ֆինանսական հաշիվ բացող կամ ֆինանսական հաշիվ ունեցող անձից ստանալ գրավոր համաձայնություն սույն գլխով նախատեսված տեղեկությունները հարկային մարմին տրամադրելու վերաբերյալ:

Եթե ֆինանսական հաշիվ բացող կամ ֆինանսական հաշիվ ունեցող անձը հրաժարվում է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված համաձայնությունը տրամադրել կամ ֆինանսական հաստատության կողմից համաձայնություն տալու պահանջ ներկայացնելու պահից 10 օրյա ժամկետում չի տրամադրում համաձայնությունը, ապա ֆինանսական հաստատությունը մերժում է նոր ֆինանսական հաշիվների բացումը, իսկ նախկինում բացված առկա ֆինանսական հաշիվների դեպքում ֆինանսական հաստատությունը հրաժարվում (դադարեցնում) է ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարել, բացառությամբ նրանց անունով այլ հաստատությունում բացված հաշիվն իրենց դրամական միջոցները փոխանցելու կամ նրանց իրենց դրամական միջոցները տրամադրելու գործարքների: Ֆինանսական հաստատությունը ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց հրաժարվելու դեպքում այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտնում է այդ անձին:

Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ընթացակարգերի արդյունքում ֆինանսական հաստատությունը բացահայտում է հաշվետիրոջ կամ վերահսկող անձի տրամադրած տեղեկության ոչ ճշգրիտ կամ թերի լինելը, ապա ֆինանսական հաստատությունը մերժում է նոր ֆինանսական հաշիվների բացումը, իսկ նախկինում

բացված առկա ֆինանսական հաշիվների դեպքում ֆինանսական հաստատությունը հրաժարվում (դադարեցնում) է ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարել, բացառությամբ նրանց անունով այլ հաստատությունում բացված հաշվին իրենց դրամական միջոցները փոխանցելու կամ նրանց իրենց դրամական միջոցները տրամադրելու գործարքների: Ֆինանսական հաստատությունը ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց հրաժարվելու դեպքում այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտնում է այդ անձին: